ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «19» սեպտեմբերի 2017թ.

2017թ-ի սեպտեմբերի 11-ին և 19-ին՝ ժամը 11:00-ին, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ ՀՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Արմեն	Ախիյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի մարքեթինգի խմբի ղեկավար.
Անահիտ	Մկրտչյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի ծրագրերի համակարգող.
Լևոն	Հովսեփյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի իրացման գործիքակազմի կառավարիչ.
Լիիթ	Գինոսյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի ադմինիստրատիվ խմբի իրավախորհրդատու.
Մանե	Ադամյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի ծրագրերի կառավարիչ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Անի	Բազեյանը	Անի Բազեյան Հայաստանի զարգացման հիմնադրամի ադմինիստրատիվ խմբի գնումների մասնագետ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արմեն Ախիյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ՀՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ/ՆԵՐԻ/ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ/ԵՐԻ/՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Անի Բազեյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ՀՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը, մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի հետ համատեղ, ուղարկվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. ՀՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած «ՄԵԳԱՊՈԼԻՍ ԼԱԲ» ՍՊԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում հայտնաբերվել է անհամապատասխանություն, մասնավորապես, ընկերության՝ հայտը ներկայացնելու նախորդ տարիների համախառն եկամուտների հանրագումարը պակաս է մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկից:

Որոշվեց՝

1. Անի Բազեյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
1) «ՄԵԳԱՊՈԼԻՍ ԼԱԲ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:
2. Անի Բազեյանին՝

1) ՀՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցի մասով ուղարկել հարցում ՀՀ ԿԱ ՊԵԿ:

2) Ծանուցել ՀՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին ներկայացնել որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ

1. ՀՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած «ԴՈՊԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, ինչպես նաև, ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ներկայացված եզրակացությունը գնահատվել է բավարար:

Որոշվեց՝

1. Հաստատել ՀՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտի/երի/՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) «ՄԵԳԱՊՈԼԻՍ ԼԱԲ» ՍՊԸ՝ անբավարար.
2) «ԴՈՊԻՆԳ» ՍՊԸ՝ բավարար:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

2. ՀՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ՀՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «ԴՈՊԻՆԳ» ՍՊԸ-ին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ախիյան _____

Հանձնաժողովի անդամ՝

Ա. Մկրտչյան _____

Լ. Հովսեփյան _____

Լ. Գինոսյան _____

Մ. Ադամյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բազեյան _____

Հավելված

ՀԶՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով
գնանշման հարցման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի 2017 թ-ի
սեպտեմբերի 19-ի թիվ 3
արձանագրության

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

պայմանագիր կնքելու որոշման մասին

Ընթացակարգի ծածկագիրը ՀԶՀ-ԳՀԱՇՁԲ-17/2

Հայաստանի զարգացման հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար գրաֆիկական դիզայնի աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԶՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը՝

Գնահատող հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 3.1 արձանագրային որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձայն որի՝

Չափաբաժին 1:

Գնման առարկա է հանդիսանում՝ գրաֆիկական դիզայնի աշխատանքներ:

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել “X”/	Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/	Անհամապատասխանության համառոտ նկարագրություն
1	«ՄԵԳԱՊՈԼԻՍ ԼԱԲ» ՍՊԸ		X	Հայտը ներկայացնելու նախորդ տարիների համախառն եկամուտների հանրագումարը հավասար է զրոյի
2	«ԴՈՊԻՆԳ» ՍՊԸ	X		

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել "X"/	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, հազ. դրամ/
1	«ՄԵԳԱՊՈԼԻՍ ԼԱԲ» ՍՊԸ		1,490.0
2	«ԴՈՊԻՆԳ» ՍՊԸ	X	2,947.0

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ նվազագույն գնային առաջարկ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանին:

Հեռախոս՝ +374 11 597 711:
Էլեկտրանային փոստ՝ a.bazeyan@dfa.am:

Պատվիրատու՝ Հայաստանի զարգացման հիմնադրամ:

ՀՋՀ-ԳՀԱՇՁԲ-17/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ
ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱԽԻՅԱՆ